

« Զայնն բարձր և հաստ՝ նա մեծ սիրտ
է և շար:

« Թե՛ ծանրախօս լինի և յոյ՝ նա ուժով է
և բանաստր:

« Մարդ բէ՛ Զայնն արեգացն հեշէ, սրտբան
է և շարախնդաց:

« Մարդ որ գրոյին մեծ լինի՝ նա ծոյլ է
կոպիտ և անխնայ:

« Մարդ որ գրոյին երկայն և կոկոզ է՝ նա
զգոշաւոր է:

« Մարդ որ ձակասն մագու է՝ նա գազա-
նարարոյ է:

« Մարդ որ մոռոյքն չափաւոր է՝ բարբն
աղէկ է:

« Մարդ որ աչքն բոյս և կարմրագոյն է,
նա քան զգագանն շար է:

« Մարդ որ աչքն կոկոն է՝ նա բնութեամբն
անհաստատ է:

« Մարդ որ ունքն շատ մազ է՝ նա նեղ-
սիրտ է:

« Մարդ որ քրքրոնքն հաստ է՝ նա սրա-
միտ է:

« Մարդ որ նեղ ձակաս է՝ նա շատակոյ է:

« Մարդ որ փուս ձակաս է՝ նա ամօրիւտ է:

Եւ կամարկապցի իւր դիմազննական
կամ դիմագիտական այս առածները, զեռ
քիթի, ականջի, վիզի, լանջի, բազուկի,
ձեռքի և մատներու ու ոտքի այլ և այլ
ձևերու և նշաններու վրայ ալ տարածե-
լով, ապա կը յանգի սա եզրակացութեան
թէ՛

« առ հասարակ չափաւորն բարի է այս
« Էշանացու: »

ՏԵՊԵ. ԱՆԸԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Վեհեոյի — Մ. Ղազար
24 Դեկտեմբեր 1922

(շարունակելի)



Գ Ր Ա Կ Ա Ն

Ձ. Ռ. ՓԱՄԽԵՂԻ

ԲՆԱԻ ԵՐԲԵՔ ՄԻ ՑԱԼԻԻ

○ ○ ○

Բընաւ երբեք մի ցաւիք:
Անցածին վրայ անօգուտ
է արդ ցաւիլ եւ ողբալ:
Լուսնակը չի՛ փայլիլ հոն
ուր փայլեցաւ արեւակն:
Իր լոյսը մէկ յիշատակն
է մայրամուտ արեւուն,
Բայց մենք լուսնակ գիշերով
կը քաշենք անք օրուան:
Փոխ առնուած անոր լոյսն
որքան անդորր՝ աղուոր է,
Եւ յիշատակն ալ նոյնպէս
անդորր՝ աղուոր պէտք է 'լլար:
Անցածն անցած է, զուր է
ցաւիլն՝ ողբալն անոր վրայ:
Կորսուած ժամերը չեն ետ
դառնար այլ էւս, եւ սակայն
Չեմ ըսեր ես թէ՛ մոռցէք:
Ես չեմ ըսեր թէ՛ մոռցէք,
որովհետեւ կան ու կան
Յիշատակներ կորսուած
վայրկեաններու՝ սիրելի
Քան հրճուանքները բոլոր,
զոր կրնայ կեանքը տալ մեզ:
Պիտ՝ ուզէի որ ինչ ինչ
յիշատակներ մնային,
Բերկրանքն ինչ ինչ հանդիպմանց,
Կսկիծն ինչ ինչ հրաժեշտից,
Յիշատակներ գանձի պէս
պահուած, բայց ոչ երբեք ցաւն:
Կորսուած ժամերը չեն ետ
դառնար այլ էւս, եւ սակայն
Պիտի չուզեմ մոռնալիք:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Մ Ը Գ Ա Ր Ի Ի

Վայրկեաններ կան որ չեն ծնած մեռնելու:
Գաբրիի մէջ կեցած էի բարձրաբերձ
Պատըզգամի վրայ, գարուն գիշեր էր,
Եւ հեշտութիւն մը կը թըւէր ողջ աշխարհն:
Կը շնչէր շուրջը բոյրերն անուշակ
Երկրի հազար ծաղիկներու, եւ բոյրերն

Անթընելի ծաղկավթըրիթ ծառերու,
 Խառնեած քաղցըր զովութեանը ծովուն,
 Որ խուճ ձայնով թաւալելով կ'ընդհարուէր
 Հարուածներէն արձագանգուող ժայռերուն.
 Զի փոթորիկը դեռ հագիւ էր դաղերը,
 Եւ չէր ցատուա՞ն ալիքներուն հանդարտած:
 Պայծառ լուսինն ելաւ ամպի մը տակէն,
 Եւ ամպ՝ լուսնակ երկուքն ալ բոց մըն էին,
 Ճառագայթում մ'արծաթ, եւ հոն՝ ոչ հեռու՝
 Ականջիս ձայն մ'եկաւ հասաւ կիթառի,
 Միդմ՝ զարնւածք մը բընական արուեստով:
 Ո՛հ, այդ նըւազը սակայն իմ սրտիս մէջ
 Մըտփող ննջող մէկ տխրութիւնն արթնցուց,
 Մէկն անոնցմէ՝ զոր մարդ սիրով կը կըրէ:

Կար աղջնակ մը որ կ'երգէր մերթ ընդ մերթ
 Երգի կտորներ քաջահնչուն յանգերով,
 Մինչ երաժիշտն աներեւոյթ կը նուագէր
 Անկին մը՝ տակն անուշահոտ հովանոյն
 Սիւքն տառան ծաղկազրւարճ ճիւղերուն:
 Ես կը կարծեմ՝ մեղեդին այնքան դուրսի,
 Այնքան գողտրիկ էին նըւազ՝ եղանակ,
 Այնքան քաղցրիկ ձայնն աղջկան, ու գիշերն
 Այնքան զեղուն բուրուփներով՝ հեշտանքով,
 Որ եթէ ես երկար մըտիկ ընէի,
 Կեանքըս պիտի գտնէր երգին հետ վախճան:

Բայց աւելի կարճ էր ան քան թէ իմ ցաւս,
 Պիտ' ուզէի զայն ես նորէն ունկնդրել:

Անկէ ի վեր գիշեր ատեն շատ ըստէպ
 Կարծես հոգիս ինչ Գաբրի կը փախչի,
 Եւ կը կարծեմ՝ թէ ականջիս կու գայ դեռ
 Այն եղանակն, այն ձայնն հանգոյն թռչնիկի,
 Ծիծառնուկի, բայց հրահանգուած երգելու
 Դանակաւոր՝ քաղցըր՝ լարերը կտելով:
 Եւ այսպէս իմ երազներուս մէջ կը զգամ
 Զիս գրաւող քաղցըր այն տխրութիւնը դարձեալ,
 Անանուն վիշտն, ուրախութիւնը, թախիծն,
 Եւ այն ատեն կեանքս ինձ տերեւ մը կը թուի,
 Պատրաստ ծառէն փրցընելու՝ քանցուելու,
 Երբ հոգն ուզած ատենը գայ զիս ցնցել:

ՈՒՂԵՐՑ

Գացէք, երգեր, ձեզ համար
 լուսնիմ ոչ յոյս, ոչ երկիւղ.
 Զեր ժողովուրդներն ինձ համար
 են ինչպէս ձեր արցունքներն,
 Ինձ եւ քանի մը հոգւոյ՝
 որ կը սիրեն իմ տաղերս,
 Ուսպագայի քերթողաց:

ՎԵՐՋ

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

ԵՐՐԱՅԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

Ո՛Ջ ԱՍՅԵՔ

Ո՛հ, լացէք զանոնք որ Բարեւոյնի զետին մօտ կու լան,
 Որոնց սեղաններն՝ աւերակ, երկիրն՝ երազ մ'է այլ եւս.
 Լացէք Յուդայի ջախջախ քրնարին վրանն, ողբացէք...
 Իրենց Աստուծուն տան մէջ կը բնակին արդ անաստուածներն:

Եւ Խաբայէն իր արիւնոտ ոտքերն ո՞ր պիտի լըւայ.
 Ե՛րբ պիտի հնչեն Սիոնի սարէն երգերն անուշակ.
 Ե՛րբ մեղեդիներն Յուդայի նորէն պիտի բերկրեցնեն
 Իրենց երկնանուազ ձայնէն վաղ թնդող ու տրոփող սրտերն:

Տոհմեր թափառոտ ոտքերով, կուրծքով հիւծած ու ծիրաւ,
 Դէպ ի հանգստեան տեղ մ'ի՛նչպէս պիտի թռչի՜ր՝ սըլանաք.
 Հաւաքան ունի իր բունիկն, եւ աղուէսն իր որջն ու խշտին,
 Եւ մարդն՝ հայրենիք. Խաբայէլը լոկ ունի գերեզման: